ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ,
Արարատյան փ. 26
☎ (374-10) 65-05-53
Էլ. Փոստ՝ info@hlib.am

N_____

«01» հոկտեմբերի 2024թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## ԹԻՎ 040724-1047 ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և հաշվի առնելով ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից 2024 թվականի հունիսի 14-ին ստացված թիվ Ե/1401-24 գրությունը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2024 թվականի հուլիսի 04-ին հարուցվել է թիվ 040724-1047 վարչական վարույթը՝ «ՆՐԲԻԿ ՔԵՅՔՍ» ՍՊԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ, 99-րդ, 139-րդ, 142-րդ հոդվածներով սահմանված պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով և հիմք ընդունելով Տեսչական մարմնի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 04-ի թիվ ՎՎ-1070-Ա հրամանը՝ 2024 թվականի հուլիսի 10-ին մասնագետներն այցելել են ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում նշված Ընկերության իրավաբանական հասցե՝ քաղաք Երևան, Քաջազնունու փողոց, 6 շենք, 127:

Կատարված այցի ընթացքում պարզվել է, որ Ընկերությունը տվյալ հասցեում գործունեություն չի իրականացնում (հիմք՝ 2024 թվականի հուլիսի 10-ի այցի արձանագրությունը):

Տեսչական մարմինը վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվություն ապահովելու նպատակով և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով փոխօգնության կարգով վարչական վարույթին առնչվող՝ Ընկերության գործունեության կարգավիճակի և հասցեների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով 2024 թվականի հուլիսի 15-ին դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2024 թվականի հուլիսի 18-ի թիվ 01/71-6/44595-2024 գրությամբ հայտնել է,որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական շտեմարանում 2024 թվականի հուլիսի 17-ի դրությամբ «ՆՐԲԻԿ ՔԵՅՔՍ» ՍՊԸ-ի իրավաբանական հասցեն է քաղաք Երևան, Նորք-Մարաշ թաղամաս, Քաջազնունու փողոց 6, 127, գործունեության հասցեն բացակայում է, Ընկերության կարգավիճակը ժամանակավոր դադարեցված է:

Վարչական ակտի հասցեատիրոջը հայտնաբերելու նպատակով 2024 թվականի հուլիսի 18-ին և 24-ին կատարվել է այցեր՝ Ընկերության քաղաք Երևան, Քաջազնունու փողոց 6, 127 հասցե: Նշված հասցեում կատարված այցերի ընթացքում Ընկերությունը չի հայտնաբերվել (հիմք՝ 2024 թվականի հուլիսի 18-ի և հուլիսի 24-ի այցի արձանագրությունները):

Վարչական ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու անհրաժեշտությունից ելնելով, հիմք

ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 3-րդ և 4-րդ մասերը՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում 2024 թվականի հուլիսի 04-ին հարուցված թիվ 040724-1047 վարչական վարույթը 2024 թվականի հուլիսի 31-ի թիվ 01/16890-2024 որոշմամբ կասեցվել է՝ մինչև կասեցման հիմք հանդիսացած հանգամանքի վերանալը (բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը):

Միաժամանակ, վարչական ակտի հասցեատիրոջը հայտնաբերելու նպատակով 2024 թվականի սեպտեմբերի 19-ին և սեպտեմբերի 24-ին այցեր են կատարվել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում նշված Ընկերության իրավաբանական հասցե՝ քաղաք Երևան, Քաջազնունու փողոց 6, 127: Նշված հասցեում կատարված այցերի արդյունքում Ընկերությունը կրկին չի հայտնաբերվել (հիմք՝ 2024 թվականի սեպտեմբերի 19-ի և սեպտեմբերի 24-ի այցի արձանագրություններ):

Տվյալ դեպքում վարչական մարմինը արձանագրում է, որ կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքը չի վերացել՝ հնարավոր չի եղել ի հայտ բերել վարչական ակտի հասցեատիրոջը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «ե[1]» կետի համաձայն՝ «Վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ լրացել է սույն օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետը, և այդ

ընթացքում չի վերացել վարչական վարույթի կասեցման հիմք հանդիսացած հանգամանքը»:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-րդ մասի «ե[1]» կետը և նույն հոդվածի 3-րդ մասը, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության 19-րդ կետի 13-րդ ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄԵՄ

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում 2024 թվականի հուլիսի 04-ին հարուցված թիվ 040724-1047 վարչական վարույթը կարճել՝ վարչական վարույթի կասեցման հիմք հանդիսացած հանգամանքը չվերանալու՝ վարչական ակտի հասցեատիրոջն չհայտնաբերելու հիմքով:

2. Սույն վարչական ակտն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն վարչական ակտը ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում կարող է բողոքարկվել վարչական դատարան:

Սույն վարչական ակտն ենթակա է ծանուցման «ՆՐԲԻԿ ՔԵՅՔՍ» ՍՊԸ-ի տնօրեն Լիլիթ Մելքոնյանին, հասցե՝ ք.Երևան,Քաջազնունու փ.շենք 6,127:


ՀՀ ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26, 0046
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107

X

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN SLAVIK 3807890467 ՍԼ ԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀՀ ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26, 0046
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ՝ 8107